ՆՄՈՒՇ, այս էջը միայն հղման համար է

Employment Development Department
State of California

Փոստային առաքման ամսաթիվը՝ 00/00/00
000 0000
Նպաստների վճարման տարեսկզբի ամսաթիվը՝ 00/00/00
Միայն գրասենյակի օգտագործման համար՝ 00000

Ծանուցում՝ հնարավոր կեղծ հայտարարության վերաբերյալ

Ինչու՞ եմ ես ստանում այս ծանուցումը:

Դուք ստանում եք այս ծանուցումը, քանի որ EDD-ի ունեցած տվյալները ցույց են տալիս, որ հնարավոր է, որ դուք EDD-ին տրամադրել եք սխալ տեղեկատվություն կամ թաքցրել եք այնպիսի տեղեկատվություն, որը կապված է *«Ծանուցում՝ հնարավոր գերավճարի վերաբերյալ»* մեջ նշված իրավասության պահանջներին համապատասխանելու հնարավոր խնդրի հետ:

Ո՞րն է պատիժը, եթե EDD-ը որոշի, որ ես կեղծ հայտարարություն եմ արել:

Եթե EDD-ն որոշի, որ դուք միտումնավոր և գիտակցաբար սխալ տեղեկատվություն եք տրամադրել կամ թաքցրել եք տեղեկատվությունը՝ նպաստներ ստանալու նպատակով, ապա «կեղծ հայտարարություն» անելու համար ձեզ կարող են ենթարկել 2-ից մինչև 23 շաբաթ տուգանքի: Այս տուգանային շաբաթները կավելացվեն ձեր ընթացիկ կամ ապագա գործազրկության հայտին: Յուրաքանչյուր տուգանային շաբաթվա ընթացքում դուք պետք է ամբողջությամբ կամ մասնակիորեն գործազուրկ լինեք, ներկայացնեք վկայականներ և համապատասխանեք իրավասության բոլոր պահանջներին, սակայն այդ շաբաթների համար ձեզ նպաստ չի վճարվի: Հնարավոր է նաև, որ ձեզ պարտադրեն վճարել նախկինում ձեզ վճարված նպաստները և վճարել ձեզ վճարված նպաստների ընդհանուր գումարի 30%-ի չափով դրամական տուգանք:

Ինչպե՞ս կարող եմ տեղեկատվություն տրամադրել EDD-ին այս հնարավոր կեղծ հայտարարության վերաբերյալ:

Եթե ցանկանում եք տրամադրել տեղեկություններ ձեր հնարավոր կեղծ հայտարարության վերաբերյալ, ապա կարող եք պատասխանել ստորև նշված հարցերին, ստորագրել և թվագրել սույն փաստաթուղթը՝ *«Ծանուցում՝ հնարավոր գերավճարի վերաբերյալ»*, և այն փոստով առաքելու օրվանից **10 օրվա ընթացքում** հետ ուղարկել ստորև նշված հասցեով: Ձեր կողմից տրամադրված պատասխանները կօգնեն EDD-ին որոշել՝ արդյոք դուք տեղյակ էիք կամ պետք է իմանայիք, որ EDD-ին տրամադրված տեղեկատվությունը սխալ էր, կամ դուք միտումնավոր թաքցրել եք տեղեկությունները՝ գործազրկության նպաստ ստանալու նպատակով:

Եթե նախընտրում եք գրավոր պատասխանել, ապա հնարավորինս ամբողջական պատասխանեք հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք դուք մեզ սխալ տեղեկատվություն եք տրամադրել կամ թաքցրել եք տեղեկությունները EDD-ից: ☐ Այո ☐ Ոչ
2. Եթե դուք տրամադրել եք սխալ տեղեկատվություն, արդյոք դուք տեղյակ էիք, որ տեղեկատվության տրամադրման պահին ձեր տրամադրած տեղեկատվությունը սխալ է եղել: ☐ Այո ☐ Ոչ
3. Եթե դուք թաքցրել եք տեղեկատվությունը, արդյո՞ք այդ տեղեկատվությունը տրամադրելու պահին դուք գիտեիք, որ այդ տեղեկատվությունը պետք է տրամադրել EDD-ին: ☐ Այո ☐ Ոչ
4. Եթե դուք պարզել եք, որ ձեր տրամադրած տեղեկատվությունը սխալ է, արդյո՞ք փորձել եք տեղեկացնել այդ մասին EDD-ին: ☐ Այո ☐ Ոչ
5. Եթե դուք պատասխանել եք «այո» 1-ին հարցին, ապա ինչու՞ եք սխալ տեղեկություններ տրամադրել կամ թաքցրել այն:

   _____

6. Դուք ունե՞ք որևէ այլ տեղեկատվություն, որը ցանկանում եք ավելացնել:

   _____

Ես հասկանում եմ, որ նահանգային օրենսդրությունը նախատեսում է ֆինանսական տուգանքների և որակազրկման շաբաթների կիրառում, եթե ես միտումնավոր կեղծ հայտարարություններ եմ տարածում կամ թաքցնում եմ կարևոր փաստեր՝ նպաստներ ստանալու նպատակով:

Ես հայտարարում եմ սուտ վկայություն տալու համար պատժի ներքո, որ այս ծանուցման մեջ ներկայացված տեղեկատվությունը ճշմարիտ է և ճիշտ:

_____	_____	_____
Ստորագրություն	**Անունը տպատառ**	**Ամսաթիվ**

Սույն լրացված ձևը վերադարձնել՝

EDD
հասցե
քաղաք, նահանգ, Փոստային ինդեքս